Պարույր Սևակ

Անհաշտ մտերմություն

5

III

Աշխատանքն է գյուղում եռում:
Մի բառ միայն՝ բերքահավաք,-
Եվ մի հատիկ այդ կարճ բառում
Ամփոփվում է որքա՜ն կրակ
Որքա՜ն լարում, եռանդ ու սեր:
Այդ օրերին Թորգոմն ասես
Պտտվում է հոլի նման.
Ուր էլ գնաս, ուր էլ հասնես,
Միշտ կտեսնես նորից նրան:
Հիմա դաշտ է նա շտապում
Եվ մտածում ճանապարհին,
Որ ինչպես միշտ, ամեն տարի
Պիտի շուտով յայլաղներից
Ներքև բերել ջահելներին,
Որ գան, լծվեն հունձ ու կալին,
Եվ ինչպես միշտ, ամեն տարի,
Առաջինը ողջ շրջանում

Հնձից պրծնեն:
Միտք է անում
Եվ հիշում է Մկրտիչին:
Իսկ եթե նա աղմուկ գցի՞:
Եվ այդ մտքից նա բարկանում,
Միկիչի հետ հեռվից-հեռու
Վեճ է մղում այնպես, կարծես
Նա աղմուկ է արդեն գցել,
Նա չի թողնում ջահելներին
Գան մասնակցեն հունձ ու կալին:
Եվ Թորգոմը չի նկատում,
Որ իր համար անակնկալ
Բարձրաձայն է խոսում իրոք:
Մեկ էլ հանկարծ ծիծաղելով
Նրա դեմ է Վաչեն բուսնում:
-Այդ ո՞ւմ հետ ես այդպես խոսում,
Այդ ո՞ւմ հետ ես վիճում տաք-տաք…
Բացատրություն մինչ նա կտար,
Հասկացնում է Վաչեն ձեռքով,
Որ նա լռի:
Կողքի ձորով
Մի բահ ջուր է թավալվում ցած,
Եվ ջրի շուրջ հարյուրավոր
Հավեր, բադեր են կչկչում:
Թռչնանոցն է տեղավորված
Այդ ձորակում հարմարավոր՝
Փոքրիկ ֆերման Սաթենիկի:
Եվ դարավոր ուռենու տակ
Նրա ձայնն է հնչում հանգիստ:
Նա խոսում է Մարոյի հետ՝

Հասակակից օգնականի:
Վաչեն դառնում է Թորգոմին.
-Հապա լսիր՝ ինչ են խոսում:
Ու նստում են, նրանց լսում:
-Ո՞նց է, բաջի, էս օր Կարոն,-
Հարց է տալիս նրան Մարոն,-
Եվ իսկապես՝ Եղյան Կարոն
Գիշերելով դաշտում չորս օր
Մրսել է և հիվանդացել:
-Ասում են, թե երեկ կեսօր
Տաքությունը անց է կացել
Քառասունից-քառասունհինգ:
-Քառասունհի՞նգ: Վա՛խ, խե՛ղճ կնիկ,
Վա՛խ, քոռանա՛ մերդ, բալա՛:
-Քառասունհի՞նգ… ո՞նց թե, ա՛յ քիր,
Քառասունից վերև հոգին
Ցավին էլ ո՞նց կդիմանա:
-Ինչի՞ պիտի չդիմանա,-
Առարկում է Սաթոն հանգիստ,-
Պարտիական մարդ է, ա՛յ քիր,
Դու էդ մեկը լա՛վ իմանաս.
Պարտիական մարդու հոգին
Հարյուրին էլ կդիմանա…
Հենց սրանով կարծիք կազմիր.
Ուրիշ էլ ո՞վ կդիմանար
Էն անաստված պատերազմին…
Ու գլխով է անում բաջին…
-Քիչ է մնում, թե ականջիդ
Չհավատաս, ես իմ հոգին,-
Եվ Թորգոմը նստում հարմար

Եվ լսել է ուզում էլի:
Բայց կչկչոցը հավերի
Ստիպում է Սաթենիկին
Շուռ գալ դեպի վերև նայել:
Ու տեսնելով նախագահին
Պառավ կնոջն ինքնավայել՝
Իրենց մոտ է նրան կանչում:
Ողջ կոլխոզը շատ լավ գիտեր,
Ճանաչում էր Սաթո բաջուն:
Անժառանգ ու այրի մի կին,
Ոնց ասում են՝ «անհիշատակ»,
Կհասնի նա ամեն մեկի
Իրեն ուղղված թեթև կանչին,
Ձեռաց կօգնի, խորհուրդ կտա:
Այցելուն է նա առաջին
Ուրախության, թե տրտմության
Ամեն ժամին և լավ ծանոթ
Ողջ կոլխոզի անցուդարձին,
Տեղյակ գյուղի ամեն ինչին:
Ոչ մի կեղտոտ ասեկոսե:
Կին է այրի, «անհիշատակ»
Ոչինչ չունի օր ծերության:
Ինչո՞վ հապա, ասել կուզե,
Լցնի օրը, սիրտն ու հոգին,
Ի՞նչ խնդությամբ ուրախանա,
Երբ անձնական խինդ չունի նա:
Նրա մարդուն ողորմածիկ՝
Հիսուն-վաթսուն տարվա հովիվ
Կուլակները սպանեցին
Հոտի առաջ:

Սաթո բաջին
Ջով սարերի մարմանդ հովին,
Պաղ ջրերին շատ էր սովոր,
Եվ հետո էլ, իբրև կթվոր,
Շարունակեց ֆերմա գնալ,
Մինչև մի օր ասաց.
-Ախպե՛ր,
Էլ ձեռքերիս ուժ չմնաց:
Ուզեց մի քիչ հանգիստ ման գալ,
Բայց կռիվը պայթեց հանկարծ,
Ու նա կրկին
Ելավ ոտքի.
Մեկ՝կոլխոզում հացթուխ դառավ
Թոնիր վառեց պառավ-պառավ,
Մեկ՝ աշխատեց նա մսուրում.
Լվաց, մաքրեց երեխեքին:
Ինչ գալիս էր պառավ ձեռքից՝
Չխնայեց և ոչ մեկին.
Մխիթարեց, հուսադրեց,
Սրան-նրան թելադրեց
Թուղթ ու նամակ՝ դեպի ֆրոնտ,
Եվ իր տան մեջ ուշ գիշերով
Հին խոսքերով, աղոթքի պես
Ստալինին լալով դիմեց,
Որ նա բացի հույսի մի դուռ՝
Ջարդի Ներին՝
Շուն հիտլերին
Եվ բոլորին ետ բերի տուն…
Անցած դարի Սաթո բաջին
Դարձավ վարիչ թոչնանոցի:

Աշխատանքի, գործի սովոր՝
Նրան թվում էր անսովոր,
Որ նա պիտի ամբողջ տարին
Մեծ գործ չանի: Ի՞նչ էր անում.
Թռչուններին կուտ էր տալիս,
Ձուն հավաքում, հանձնում պահեստ:
-Ես չեմ ուզում գլուխ պահել,-
Դիմեց հիմա նա Թորգոմին,-
Ես էլ հիմա միտք եմ անում.
Ինչ որ արել՝ է՛լի կանեմ:
Լավ չի լինի՝ ես հավերին
Էզուցվանից վերցնեմ տանեմ,
Ու մոտեցնեմ ֆերմաներին:
Ճիշտ է, թեև ուժս է հատած,
Բայց մի օգուտ ես էլ կտամ,
Կով կկթեմ…
-Գիտե՛մ, գիտե՛մ,-
Ձերմ ժպտալով, Թորգոմն ասաց,-
Գնա, բաջի՛:
Եվ իմացի՛ր,
Որ ես, իբրև քո նախագահ,
Քեզնից շա՛տ եմ շնորհակալ:
Էն էլ ասեմ, որ այս տարի
Կարժանացնենք քեզ մեդալի:
-Էհ, ի՞նչ մեդալ:
Ա՛յ քեզ մատաղ,
Էդ մեդալի համար հո չի՞.
Կոտրած ձեռով Սաթո բաջին
Ուզում է, որ տա մի օգուտ
Իր կոլխոզին: Մատաղ հոգուդ,

Դե իմ մարդն էլ, ինդք ասա,
Լուսահոգին ո՞ւմ զոհ գնաց:
Դողաց ձայնը Սաթենիկի,
Եվ նա դիտմամբ բարձր հազաց,
Որ հուզմունքը հազով ծածկի…

IV

Օրըստօրե անտառն արագ
Նոր գույներով է զարդարվում,
Վերջալույսի նման վառվում
Շիկնանքներով հազարերանգ:
Վեր գալարվող բոցի նման
Քամուց քշված խազալն արդեն,
Մայրամուտին, իրիկվա դեմ
Սավառնում է լեռան վրա.
Կախվում օդում,
Ձորը պատում,
Եվ շղարշով իր ոսկեթել
Ծածկում կածան, ակունք, առու:
Մի անվտանգ, անբաց խարույկ
Վառվում է և չի մոխրանում:
Եղևնիներն են լոկ կանաչ,
Որ օրեցօր, կամաց-կամաց
Լուռ մերկացող անտառի մեջ
Երևում են ավելի պերճ՝
Իբրև գարնան գրավական:
Ծով դաշտերում էլ բերք չկա,-
Ամբարվել է պահեստներում
Եվ այնտեղից հորդել է դուրս,

Լցվել ամեն խրճիթ ու տուն:
Բերքահավաքը վերջացավ
Առաջինը ողջ շրջանում,
Փոխանցիկը ձեռքից չանցավ,
Ինչպես Թորգոմն էր վախենում:
Բարձր բերքի համբավն անցավ
Ու տարածվեց հեռու-հեռու:
Երևանից եկան հասան
Թղթակիցներ և նկարիչ:
Եվ շատ չանցած լրագրի
Երրորդ էջում իրենց տեսան
Սեթը, երեք օղակավար,
Բրիգադավար Եղյան Կարոն
Եվ Թորգոմը, որ խանդավառ
Հաղթությունից դարձած բարի
Ու մոռացած վեճ ու կռիվ,-
Ափերն ուրախ շփեց իրար
Ու Վաչեի մեջքին խփեց.
-Լսի՛ր, Վաչե, ինչ եմ ասում:
Պիտի ակումբը վերջանա՞
Առաջիկա երկու ամսում…

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

I

Երկինքը՝ կարծես լուսաքողարկված,
Մթին ամպերից բացվում է հանկարծ,
Եվ անժամանակ արթնացած քամին
Կեսգիշերային անդորրված ժամին,

Ինչ-որ մի բանից կարծես թե դժգոհ,
Ամպերն է քշում դեպի Մեծ Մասիս,
Դեպի մայր Արաքս՝ սահմանից այն կողմ:
Եվ գնդասարի կաթնագույն ուսին
Հոգնած թիկնում է մի լրիվ լուսին:
Անքնությունն է Մկրտչին տանջում,
Եվ նա վերարկուն գցելով ուսին՝
Նստում է տեղում: Կողքին անձանձիր
Աղբյուրն է անվերջ ինչ-որ բարբաջում,
Մի գառ փոշտում, հովատակ մի ձի
Ընդհատ ու բեկ-բեկ մի պահ խրխնջում,
Լռում է ապա:
Միտքը Մկրտչի
Առանց դադարի պտույտ է անում:
Մերթ այնպես, ինչպես համառ ճանճերին՝
Մկրտիչը ձեռքով այդ միտքն է վանում,
Մերթ՝ այն թվում է այնքա՜ն հաճելի,
Այնքա՜ն գրավիչ:
Արի՛, Մկրտիչ,
Դուրս եկ խճճված մտքի ցանցերից:
Ու նա չի քնում:
Ու միտքը գնում
Մերթ հեռանում է, մերթ գալիս մոտիկ:
Որոշ է բախտը իր ժողովրդի:
Ապրում են իրենք մի մեծ տան նման,
Եվ ինչպես տանը, մեծ ընտանիքում,
Կան հազար հոգսեր:
Բայց մի հզոր սեր,
Որ արյան մեջ է, ամենքի հոգում,
Կապում է ամուր բոլորին իրար,

Եվ մի վերընթաց ուղիղ ճանապարհ
Խոչընդոտների վրայով անվերջ
Իրենց տանում է բարձունքից-բարձունք:
Լինում են, ինչ խոսք, գժտություն ու վեճ:
Ահա Թորգոմը:
Վտակը ցածում
Ինչ-որ խոսում է խորին քնի մեջ,
Իսկ արշալույսը աչքերն է բացում,
Աղոտանում է խավարը դանդաղ:
Ի՞նչ է պատահել արդյոք Թորգոմին,
Իր ընկերոջը, իր բարեկամին,
Սիրելի մարդուն, բան չեմ հասկանում:
Մոտ քսան տարի առաջ էր տանում
Իր ձեռքով հիմնած կոլեկտիվը մեծ:
Միշտ առաջինը ամեն բանի մեջ:
Այս անգամ մարդը սխալ է գործել:
Եվ ինքը, ինքը ինչքան է փորձել
Հասկացնել նրան: Իր բարեկամը
Դեռ համոզված է, որ այս անգամ էլ՝
Այս կառուցվելիք ակումբի հարցում
Ինքը ճիշտ է և սխալ չի գործում:
Բայց կհասկանա, այլ կերպ չի կարող,-
Եվ Մկրտիչը ելնում է ոտքի:-
-Գյուղ իջնենք, տեսնենք ինչ կասի Կարոն:
Երբ որ գյուղ հասավ, Մկրտչի հարցին՝
Թե ո՞ւր է Կարոն, պատասխան տվին,
Որ դրությունը շատ ծանր է տղի,
Պառկած է հիվանդ: Թորգոմն էլ արդեն
Մեկնել էր քաղաք, որ շինանյութեր
Հասցրներ շինվող ակումբի շենքին:

Ու վերադարձավ Մկրտիչը կրկին,
Երբ որ այցելեց ու տեսավ, որ դեռ
Կարոն տենդի մեջ ի վիճակի չէ
Ո՛չ հարցեր քննել ու ո՛չ էլ լուծել:

II

Ճամփան ելնում է սարն ի վեր
Կեռմաններով իր անհարմար,
Ոտքերիդ տակ՝ խորունկ վիհեր,
Գլխիդ վերև՝ կապույտ կամար,
Որ ամպերով ծոպավորված՝
Ավելի է կապույտ դառնում:
Երկու հոգի ձիեր նստած,
Անվերջ դեպի վեր են ելնում,
Վե՛ր – կարծես թե դեպի երկինք:
Ձիերն անվերջ այդ վերելքից
Քրտնակալած ու բեզարած,
Վեր են ելնում դանդաղորեն:
Աշունն էլի աներևույթ
Վրձինները իր ձեռքն առած,
Արոտներն է ոսկեվորել:
Իջել է նա մերկ հանդերին
Եվ անտառին դեղնականաչ:
Կարծես հեռու մի հրդեհի
Ցոլքն է փռվել երկրի վրա:
Գարնան գետը հորդ ու վարար
Բարակե՛լ է, դարձել առո՛ւ…
Խոր աշունն է լեռնաշխարհում:
Ապաքինված, արդեն առողջ՝

Պարտքարտուղար Եղյան Կարոն
Թորգոմի հետ զրույց անում,
Դեպի յայլաղ են բարձրանում:
Երևանից նոր ետ դարձած,
Ոգևորված, դարձած բարի՝
Թորգոմն ամբողջ ճանապարհին
Նոր լուրեր է հայտնում նրան,
Եվ մեծ մասամբ խոսքը նրա
Պտտվում է կոլխոզի շուրջ…
Եվ Թորգոմը ոգևորված
Թվարկում է երկու տարվա
Պլաններն իր.
Ակումբին կից
Պիտի շինի նոր հյուրանոց:
Լավ սրտատաշ բազալտ քարով,
Հիսուն-վաթսուն մահճակալով:
Հետո՝ պանրի մի գործարան,
Հետո…
Հարց է տալիս Կարոն.
-Իսկ քաղաքում, մի ինձ լսիր,
Ի՞նչ իմացար գոմի մասին
Եվ կամ, ասենք, հենց բաղնիսի:
Հը՞, ի՞նչ կասես, ընկեր Թորգոմ:
«Ընկեր» բառը նախագահին
Հարկադրեց զգուշանալ:
Տարված անուշ անըրջանքով՝
Չէր էլ անցել մտքով նրա,
Թե քարտուղարը պարտկոմի
Իր հարուցած մտքի վրա
Նայում է լուրջ կասկածանքով:

-Ձմեռանոց…կկառուցենք,-
Թորգոմն ասաց սառն ու դժգոհ,
Մտածելով, որ Կարոն էլ
Վարակվել է անտարակույս
«Մկրտչյան հիվանդությամբ»:
-Իսկ ինչո՞ւ «գոմ», ոչ թե «գոմեր»:
-Էհ, թող լինի «գոմեր» թեկուզ:
-Իսկ ե՞րբ, Թորգոմ:
Ու Թորգոմն էլ
Սիրած խոսքը կրկնեց նորից.
-Կկառուցենք մենք ամեն ինչ,
Միայն՝հերթով:
-Հետո՞, հետո՞,-
Խիստ անհամբեր հարցրեց Կարոն,
Եվ այլևս չսպասելով
Պատասխանի, շարունակեց.
-Ձմեռանոց է հարկավոր
Մեզ հենց հիմա՝
Ձմռան համար…
Կարոն ձիու սանձը ձգեց,
Որ Թորգոմը հավասարվի,
Եվ լրջորեն շարունակեց.
-Անմիջապես պետք է շարվի,
Եթե կուզես՝ վաղը թեկուզ:
Այս մեկ: Ունենք նաև «երկուս»:
-Բայց, սպասի՛ր, ախր էդ ո՞նց,
Ո՞նց ենք շինում ձմեռանոց:
-Մենք ամեն ինչ ունենք, Թորգոմ,-
Բանվոր, քարտաշ, ճարտարապետ
Եվ շինափայտ, էլ ի՞նչ է պետք:

-Ո՞նց թե…
-Այո՛:
-Ո՞նց թե, Կարո՛:
-Այո, թեկուզ հենց այն քարով,
Որ ակումբի համար արդեն
Պատրաստված է:
-Իմ աստվածը,
Դու զժվել ես, կարծես, Կարո՛:
-Դու ես զժվել, Թորգոմ, հենց դո՛ւ:
Լսի՛ր, թե քեզ ինչ եմ ասում:
Գիտե՞ս, մարդիկ ինչ են խոսում.
Նախագահ են Քաղսովետի
Քեզ անվանում, մի մականուն
Որ ցանկանում – չես ցանկանում
Քո անվանն է կպել արդեն:
Ժողովուրդը հենց դրանով
Իր կարծիքն է արտահայտել:
Ասենք՝ նաև արտահայտեց
Նա կարծիքն իր որոշակի:
Դու հիշո՞ւմ ես, ընկեր անգին,
Զեկուցումն այն, մեր ակումբում:
Սա լուրջ բան է, ազդանշան,
Որ, անկասկած, այն է ասում,
Թե կըտրվում մասսաներից.
Հեռանում ես, առաջ վազում:
-Եթե անգամ ճիշտ ես ասում,
Ապա դու էլ մասսաներից
Կտրվել ես՝ ետ մնալով,
Քնով անցել՝ չիմանալով
Այն, որ արդեն հասանելի

Բան է դարձել մասսաներին:
-Մասսաների՛ն, մասսաների՛ն:
Հետո՞…-զլեց նա ձայն իր բամբ,-
Իսկ ո՞վ ասաց, թե կուրությամբ
Պիտի կախվենք մասսաների
Պոչից, Կարո՛…
-Լսի՛ր, Թորգոմ:
Եվ մենք իզուր ջուր չծեծենք:
Եվ իմացիր, մենք տիպային
Ձմեռանոց կկառուցենք
Հենց վաղվանից: Մինչև հիմա
Բերքով էինք մենք զբաղված,
Հունձ ու կալ էր, չկար հնար
Հարցը կարգին քննարկելու:
Հիմա, առանց քողարկելու,
Ես քեզ պիտի անկեղծ ասեմ…
Նրանք հանկարծ նկատեցին,
Որ ֆերմա են արդեն հասել:
Եվ տաք վեճը հարկադրված
Անժամանակ ընդհատեցին:

III

Յուրաքանչյուրը լուռ ասպանդակեց իր ձին:
Տղաները, որ դեռ չէին տեսել նրանց,
Ճամփից փոքր-ինչ ներքև՝ փափուկ լեռնալանջին
Արտասանում էին իրենց անգիր արած
Ոտանավորները, խաղում էին, երգում:
Եվ այդ պահին հանկարծ ականջներին նրանց
Հասավ բարակ մի ձայն՝ մանկական ու զրնգուն:

Մի մանուկ էր երգում,
Ինչպես պարզվեց հետո՝
Հեղինեի չորրորդ չարաճճի տղան,
Մի երգ, որ վերջերս հորինել էր Արտոն:
-Եկեք խնդրենք Միկիչին,
Թորգոմի հետ չվիճի,
Գնա շրջկոմ ու ասի,
Որ մենք չունենք հասարակ
Ձմեռանոց կոլխոզի,
Իսկ նա պալատ է շինում
Մեր գյուղ Սովետաշենում:
Քարտուղարը շրջկոմի
Շուտ զանգ կտա Թորգոմին,
Հետո այսպես կխոսի.
Քաղսովետը իսկույն թող,
Վերադարձիր կոլխոզին…
-Դու լսո՞ւմ ես, Թորգո՛մ, թե չես լսում՝ լսի՛ր.
Նույնիսկ երեխեքը
Պարզ տեսնում են ելքը,-
Եվ ծիծաղեց Կարոն ու շուռ եկավ թամբում:
-Եթե քո հույսն էս է՝ երեխեքի երգը,
Մեղքս շատ ես գալիս, թող քեզ աստված հասնի,-
Ասաց նախագահը՝ առերևույթ անփույթ,
Սակայն սրտի խորքում վիրավորված երգից:
-Չես խուսափի, Թորգոմ, դու այդ միակ ելքից,-
Ակնարկելով նորից երգը երեխեքի
Ասաց Մկրտիչը, երբ որ նրանք արդեն
Տեղ հասնելով՝ նրա վրանի տակ
Նախաճաշել, փոքր-ինչ հանգստացնել
Ու նույն հարցին էին անդրադարձել կրկին:

Իսկ Թորգոմը ժպտաց մանկան նման բարի:
Եվ ժպիտը նրա ավելի էր ասում,
Ամեն տեսակ խոսքից պերճ էր խոսում:
Մկրտիչն ու Կարոն նույն ժամանակ,
Երբ ծիծաղում էր և կատակում,
Փաստարկներ էին լուռ հավաքում:
-Մկան համար մահ է, կատվի համար՝ հանաք,-
Ուզեց Մկրտիչը չհամբերել,
Բայց Թորգոմը մինչ այդ վրա բերեց.
-Դեռ գոմը թող մի կո՛ղմ,
Ասա մի հասկանանք.
Էդ քո գոված ցեղի բուրդն ի՞նչ եղավ,
Երբ մթերումից, ոոչա՛ղ տղա,
Դեռ մեզ պակասում է հարյուր կիլո:
Հը՞, ի՞նչ կասես սրան, ընկեր Կարո,-
Եվ խորամանկ ժպտաց շեղ աչքերով:
-Մինչ ես «առ» եմ ասում, դու քշում ես «ակոս»,-
Ասաց Մկրտիչն ու աչքի տակով
Խորհրդավոր նայեց Կարապետին:-
Անհո՛գ մնա, ջա՛նս, մթերումը բրդի
Ոչ թե կտանք մի կերպ, ինչպես ամեն տարի,
Այլև, ընկեր Թորգոմ, ես լուրջ խոսք եմ տալիս
Ազատ մթերման դեմ հանձնել ևս կես տոնն…
Իսկ Թորգոմը ժպտաց.
-Կատակներդ քե՛զ թող,
Ես այդ հարցում արդեն լուրջ եմ խոսում քեզ հետ:
Սակայն «լուրջ խոսելը» չեղավ արդյունավետ:
Թորգոմը լրջացավ անմիջապես,
Կատակախառն տոնը փոխվեց իսկույնևեթ,
Եվ մի ակնթարթում, այն մարդու պես,

Որ փոխարեն գինու խմել է նավթ կամ ձեթ՝
Ծամածռվեց դեմքը մեր Թորգոմի,
Երբ որ խոսքը նորից պտտեց եկավ
Հասավ ակումբին ու վերաբերեց գոմին:
Իզուր Մկրտիչը փորձեց խոսել խաղաղ,
Զուր օգնության կոչեց գիտություն ու լեկցիա,-
Նրա տետրակները կոպեկի տեղ չանցան:
Միջամըտեց Կարոն, նոր փաստարկնե բերեց՝
Նույնիսկ և Սերգեյի մի նամակից:
Զանաց նրա վախն ու կասկածները ցրել,
Լրջությունը չօգնեց, դիմեց և կատակի,
Բան դուրս չեկավ սակայն, Թորգոմն էլի
Մնաց առաջվա պես անդրդվելի:
Ու վրդովվեց Միկիչն այդ միալար տոնից.
-Ախպե՛ր, բավական է «Մուկ ու կատու» խաղանք:
Սա մի հարց է արդեն դատ ու դատաստանի:
-Իսկ քեզ համար պարզ է նաև դատավճի՞ռ,-
Բարկությունից բոլոր «ը»-երը կուլ տալով՝
Նախագահը նետեց Մկրտիչին:
-Դատավճիռը, չէ՛, բնավ ինձ հայտնի չէ,
Քանի որ նա միայն քեզ է վերաբերում,-
Միկիչը հարվածեց ասես սրով:
Հանդից եկած Արտոն ուրախ փոթկացրեց,
Երազիկը խնդաց.
-Յոթով զրո՛…
Հայրը դարձավ դստեր, չափեց ոտից գլուխ:
-Ախր, հայրիկ…
-Հայրի՞կ, թե՞ զահրումար:
Երազիկը լռեց, մի կողմ քաշվեց հլու:
-Մասխարա եմ դարձել սրանց համար,-

Եվ վրանից ելավ արագ-արագ,
Պատասխան չտալով իրեն ուղղված հարցին…
Դրսում լեռան քամին սև թուխպերն էր քշում:
Իսկ արևը հեռվում՝ Մասիսների լանջին
Կարծես վայր ընկնելով՝ դարձել փշուր-փշուր,
Խառնվել էր նրանց հավերժական սառցին: